


1917

Բարդություններ

Դասագիրք

Եղբայրական շահակառություն



Ե. 1913

ԳԱՍՏՐԻՔ

ԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ


ԶԵԽԱԳԻՑՈՒԹԵԱՆ

Ա. Տ Ա Բ Ի

Ծխական գպրոցների Գ. Մարւայ նիւթ

(Երկրորդ բարեփոխած սպազրութիւն)

ՊԼԱՆ 1:5 կմ.



Կ Ե Զ Մ Ե Ց Ի Ն

167

Պերճ ԹԱՐՎԵՐԴԻԵԱՆ և ԽԱՉ. ՅԱՐԱՒԹԻՒՆԵԱՆ

Համաձայն „Հայոց Եկեղեցական Տարրական Դպրոցների
Ուսումնական Ծրագրի“:

ԵՐԵՒԱՆ

ՏՊԱՐԱՆ «ԿՈՒՆՑՈՒՐԱ»

1913

513(075)
թ - 33

2010

Հ Արմ.
3-829₂

ԳԱՍՏԳԻՐՔ

3-829₂

ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ

Տ13(075)

թ-33 ԶԵԽԱԳԻՏՈՒԹԵԱՆ


ԱԺ

Ա. Տ Ա Բ Ի

Ծիսկան դպրոցների գ. տարւայ նիւթ

(Երկրագ բարեփոխած սպազրութիւն)

ԳԻՒՆ 15 ԿՈՎ.



Կ Ե Զ Մ Ե Ց Ի Ն

ՊԵՐՃ ԹԱՐՎԵՐԴԵԱՆ և ԽԱԶ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Համաձայն „Հայոց Եկեղեցական Տարրական Դպրոցների
Ուսումնական Ծրագրի”:

ՀՆՎ. № 17913

12002

ՏՊԱՐԱՆ «ԿՈՒՂՏՈՒՐԱ»


1913

ԳՎԱՔՄՈՒԹ
ԾԱՌԱՋԱՇԱՏԻՎ
ՎԱՅՐԱՎԱՐԱՎԱՐ

Ա Դ Յ Ա

Գյուղական քաղաքացիության մարմին

Առաջարկագործության բաժնետուն



ԿՎԵՏԵ-ԱԿ.



29407.63

(ՀՀ) բյունական

Ֆիզիքական և երկրաչափական մարմիններ.

Մեր չորս կողմը՝ դասարանում, բագում, վոլոցում, տանը և ամեն տեղ, մենք տեսնում ենք բազմաթիւ առարկաներ, օրինակ. նստարան, գրատախտակ, ծառ, քար, տուն, կառք, սեղան, աթոռ, մահճակալ, սար, ձի, թանգաման, մարդ և այլն. այդ բոլոր առարկաներին առաւմ ենք մարմիններ:

Այդ մարմիններից ամեն մէկը տարածութեան մէջ բռնում է մի որոշ տեղ: Այն մարմինները, որոնք տարածութեան մէջ տեղ են բռնում, կոչւում են ֆիզիքական մարմիններ. իսկ տարածութեան այն մասը, որը բռնւած է որևէ ֆիզիքական մարմնով, կոչւում է երկրաչափական մարմին. օրինակ. գիրքը տարածութեան մէջ բռնում է մի որոշ տեղ. այդ տեղը կը լինի գրքի երկրաչափական մարմինը: Ինչ ձեր որ լինին ֆիզիքական մարմինները, նրանց բռնած տարածութիւնն էլ կունենայ նոյն ձեր. հետեւպէս, երկրաչափական մարմինների ձեր կախւած է ֆիզիքական մարմինների ձերից. օրինակ. գունդը կլոր է. նրա բռնած տեղը կամ նրա երկրաչափական մարմինը նոյնպէս կլոր կլինի:

Որովհեակ ֆիզիքական մարմինները լինում են զանազան ձեերի, դրա համար էլ երկրաչափական մարմինները լինում են նոյնպէս զանազան ձեերի:

Այդ ձեերից մենք այժմ կը սովորենք խորահարդի մասին:

Խորանարդ (Կյծ)։

ԽՈՐԱՆԱՐԴԸ մի արկղանման մարմին է, որն ունի վեց երես, այդ երեսները բոլորն էլ իրար հաւասար են։


Որովհետեւ խորանարդն ունի վեց երես, զրա համար նրան վեցերեւանի էլ ենք ասում։

Խորանարդ կարելի է շինել փայտից, կաւից, երկաթից և ուրիշ նիւթերից։

Որպէս զի իմանանք, թէ մի վեց երեսանի մարմին խորանարդ է թէ ոչ, այսինքն, նրա բոլոր երեսներն իրար հաւատաբ են, զրա համար վերցնում ենք այդ մարմինը և դնում սպիտակ թղթի վրա ու մատիտով գծում ենք թղթին կպած երեսի չորս կողմը. յետոյ մէկատավ կարում ենք մատիտով գծած տեղերից և եթէ այդ կարած թուղթը մարմնի բոլոր երեսներն էլ հաւատարապէս ծածկի, կ'նշանակէ այդ մարմինը խորանարդ է, այսինքն, բոլոր երեսներն էլ իրար հաւասար են։

ԵՐԵՍՆԵՐ (Վրան) Խորանարդը՝ ինչպէս և միւս բոլոր մարմինները, ունի սահմաններ, որոնցով նա բաժանում է շրջապատի օդից կամ ուրիշ առարկաներից. այդ սահմաններից տմեն մէկը առանձին կոչում է խորանարդի երես, իսկ բոլոր երեսները մէասին վերցրած կազմում են խորանարդի մակերեսոյթը. ուրեմն խորանարդը ունի վեց երես և մի մակերեսոյթ։

Խորանարդի երեսը իր մի մասը չի կազմում, որովհետեւ երեսը չունի հաստութիւն, այլ ունի երկարութիւն



Նկար 1.

և լայնութիւն։ Երեսը չի կարելի բաժանել մարմնից, այլ միայն կարելի է երեսկայել։

Խորանարդի վեց երեսներից չորսը կոչում են կողային երեսներ, որովհետեւ գտնում են խորանարդի կողքերին, իսկ մնացած երկուսը կոչում են հիմքի երեսներ վերին և ստորին։

Խորանարդի երեսները պատահում են իրար. այսպէս օրինակ, ստորին երեսը պատահում է կողային երեսներից ամեն մէկին, իսկ չի պատահում իրեն հանդէպ գտնված երեսին. նոյնպէս և կողային երեսներից ամեն մէկը պատահում է բոլոր երեսներին, բացի իր հանդէպ գտնւածից։ Ուրեմն խորանարդի ամեն մի երեսը պատահում է իրեն հարեան չորս երեսներին, իսկ չի պատահում իր հանդէպ գտնւածին։ Խորանարդի երեսները վերջանում են գծերով, որոնք կազմում են այդ երեսների սահմանները։ Խորանարդի ամեն մի երեսն ունի չորս գիծ կամ սահման։

ԿՈՂԵՐ։ (Քեծրո). Այն տեղը, որտեղ խորանարդի երեսներից երկուսը պատահում են իրար, կազմում է ուղիղ գիծ. այդ գիծը կոչում է խորանարդի կող։ Խորանարդն ունի տասներկու կող, որոնք բոլորն էլ իրար հաւասար են։

Արտաքին և ներքին անկիւններ.

Այն տեղը, որտեղ խորանարդի կողերը պատահում են իրար, կազմում են անկիւններ, այդ անկիւնները կոչում են արտաքին կամ գծային անկիւններ. որովհետեւ կազմուած են գծերից և գտնուում են խորանարդի գրախ

կողմում: Նկար 2:

Իսկ այն անկիւնները, որոնք կազմում են երեսների իրար պատճելուց, կոչւում են ներքին անկիւններ: Այդ անկիւնները գտնուում են խորանարդի ներսում դրա համար էլ կոչւում են ներքին անկիւններ:

Խորանարդի ամեն մի երեսն ունի չորս գծային անկիւն, իսկ մենք գիտենք, որ խորանարդն ունի վեց երես, ուրեմն խորանարդն ունի ընդամենը $6 \times 4 = 24$ գծային անկիւն:




Նկար 3.

Մի երես ներքին անկիւն չի կարող կազմել. երկու երեսներից կազմւած անկիւնը կոչւում է երկ-երեսանի անկիւն: Նկար 3:

Երեք երեսներից կազմւած անկիւնը
Նկար 4:

Երկ-երեսանի անկիւնները կազմւում են կամ երկու կողային երեսներից, կամ մի կողային և մի հիմքի երեսներից. իսկ երեք-երեսանի անկիւնները կազմւում են երկու կողային և մի հիմքի երեսներից:

Խորանարդն ունի տասներկու երկ-երեսանի անկիւններ իր կողերի թւի չափ և ութ երեք-երեսանի անկիւններ. այդ երեք-երեսանի անկիւնները կոչւում են խորանարդի գագաթներ. ուրեմն խորանարդն ունի ութ գագաթ:



Նկար 4.

Վարժութիւններ.

1) Թւեք այն բոլոր տուարկաները, որոնք նման են խորանարդին:

2) Նկարեցէք խորանարդ:

3) Նկարեցէք գծային անկիւն:

4) Նկարեցէք երկ-երես. և երեք-երեսանի անկիւններ:

Հարցեր: Որո՞նք են կոչւում մարմիններ: Ո՞րն է կոչւում խորանարդ: Քանի՞ երես ունի խորանարդը: Քանի՞ կող, գագաթ և քանի տեսակ անկիւններ ունի խորանարդը: Քանի՞ երկ-երեսանի և երեք-երեսանի անկիւններ ունի խորանարդը: Ո՞ր երեսներն են իրար պատճեռում: Մի գագաթում քանի՞ երեսներ են հանգիստում իրար:

Գաղափար տեղերի մասին.

Վեցնենք խորանարդը և զնենք սեղանի վրա մեր առաջ. նրա այն երեսը, որը գտնւում է մեր զիմաց, կոչւում է առջև կամ առջևի երես. առջևի զիմացի երեսը կոչւում է ետև կամ ետևի երես. խորանարդի այն երեսը, որը գտնւում է մեր աջ ձեռքի կողմը, կոչւում է աջ երես, իսկ այն երեսը, որը գտնւում է մեր ձախ ձեռքի կողմը, կոչւում է ձախ երես:

Խորանարդի այն երեսը, որը կամ է սեղանին, կոչւում է ստորին կամ ներքին երես, իսկ նրա զիմացի երեսը կոչւում է վերև կամ վերևի երես: Ստորին և վերին երեսներին ասում ենք խորանարդի հիմքեր: Ուրեմն խորանարդն ունի երկու հիմք՝ վերին և ստորին:

Ուղղութիւններ.

Կէծ: — (Տօնա). Եթէ վեցնենք մատիտը և նրա սուրծայրը կպցնենք թղթին, կամ կաւիճի սուրծայրը՝ գրա-

տախտակին, մատիտը կամ կաւիճը հեռացնելուց յետոյ,
իրանցից թղթի կամ գրատախտակի վրա կթողնեն մի
նշան. այդ նշանին ասում ենք կէտ: Երկրաչափական կէտը
չունի ոչ երկարութիւն, ոչ լայնութիւն և ոչ էլ բարձրու-
թիւն. վրա համար էլ եթէ մի քանի հարիւր կէտեր դնենք
իրար վրա, էլի կստանանք մի կէտ:

ԳԻԾ:—(Լինիա). Գիծը կազմւած է կէտերից. Եթէ
մենք մատիտով մեր տետրակի վրա նկարենք մի քանի
կէտեր իրար կողքի կպած, կստանանք շատ կէտերից
կազմւած մի շարան, որին ասում ենք գիծ: Նկար 5:

Ինչ տեսակ գիծ էլ որ քաշելու
լինենք, նա կազմւած պիտի լինի կէտերից: Նկար 5.

աերից: Եթէ վերցնենք մի գիծ և նրան
կէս անենք կամ մի քանի մասերի բաժանենք, ամեն մի
կտորը կլինի դարձեալ գիծ. գիծն ունի միմիայն երկա-
րութիւն, իսկ լայնութիւն և բարձրութիւն չունի: Եթէ
գիծը բաժանենք այնպիսի փոքր մասերի, որ այլևս հնա-
րաւոր չլինի բաժանել, այն ժամանակ կստանանք կէտեր:

ԳԾԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ:—Որովհետև մենք կարող ենք
կէտերը շարել իրար կողքի զանազան ուղղութեամբ, ուս-
տի դրանցից ստացւած գծերն էլ կլինեն զանազան տե-
սակների ուղիղ, կոր, կոտրտւած, բոլորածե և այլն:

ՈՒՂԻՂ ԳԻԾ:—(Պրյամայ լինիա). Եթէ մենք կէտերը
շարենք իրար կողքի միևնոյն ուղղութեամբ, այսինքն՝
առանց ծոելու այս ու այն կողմը,
կստանանք ուղիղ գիծ: Նկար 6.

Ուղիղ գիծ է խորանարդի ամեն
մի կողմը. ուղիղ գիծ է պարտէզում
երկու ծառերից ձիգ կապած պարանը,

քանոնի կողը և այլն: Եթէ ուղիղ գիծը մի քանի մասերի
բաժանենք, ամեն մի մասը կլինի դարձեալ ուղիղ գիծ:

ԿՈՏՐՏԻԱԾ ԳԻԾ:—(Լուսական լինիա). Եթէ վեր-
ցնենք մի քանի հատ ուղիղ գծեր և զանազան ուղղու-
թեամբ բերենք ու ծայրերը
իրար հետ միացնենք, կստա-
նանք կոտրտւած գիծ: Նկ. 7:
Նկար 7.

ԿՈՐ ԳԻԾ:—(Կրիայ լինիա). Կոր կոչւում է այն
գիծը, որի ամենափոքրիկ մասն ան-
գամ ուղիղ գիծ չէ: Նկար 8:

Եթէ վերցնենք պարանը և փաթաթենք մի գերանի
վրա, կստանանք կոր գիծ: Կոր գծերն էլ լինում են զա-
նազան տեսակների. շրջանաձև, պտուտակաձև և ոլիքա-
նման:

ԲՈՒՌԱՋԵԿ ԿԱՄ ՇՐՋԱՆԱՋԵԿ ԳԻԾ:—(Կրցի). Եթէ
կէտերը շարենք մի ուղղութեամբ այնպէս, որ նրանք մի
տեղից սկսելով պատւեն ու դարձեալ հան
ու միանան իրանց սկսած կէտին, կը կազ-
մի կոր կամ շրջանաձև գիծ: Նկար 9.
շրջանի մի կըտորը կլինի. Կոր գիծ:

ԽԱՌԸ ԳԻԾ:—(Օմետանայ լինիա). Կոր և ուղիղ
գծերից կազմւած գիծը, կոչ-
ւում է խառը գիծ: Նկ. 10:

**ՈՒՂԻՂ ԳԾԵՐԻ ՏԵՍԱԿ-
ՆԵՐԸ:**—Ուղիղ գծերը լինում

Նկար 10.

Են զանագան ուղղութիւնների՝ հորիզոնական, ուղղահայեց, թեք և գուգահեռական:

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ԳԻԾ: — (Горизонтальная линия).

Հորիզոնական կոչւում է այն գիծը, որը գծւուծ է ձախից դեպի աջ առանց նկար 11.

վերև կամ ներքեւ թեքւելու: Նկար 11:

Հորիզոնական են զբատախտակի վերին և ներքին եզրերը, դասարանի յատակը և այն:

Երբեմն կարիք է լինում իմանալ սեղանի երեսը հորիզոնական է թէ ոչ, զբահամար գործ ենք ածում մի գործիք, որը կոչւում է հարթաշափ (ватерпасъ — թարագ): Նկար 12:

Այդ գործիքն ունի հետեւալ կազմութիւնը. վերցրած է մի ապակէ խողովակ, մէջը լցրած է ջուր, բայց ոչ բուլորովին լիքը, այլ մի փոքրիկ տարածութիւն զատարկ է թողած և ապա խողովակի բերանը ամուր փակուծ է: Որպէսզի գործածութեան ժամանակ ապակէ խողովակը չըկոտրւի, նրան ամրացնում են մի հարթած փայտէ արկղիկի մէջ, որի վերիը, մէջտեղում կայ մի փոքրիկ բաց տեղ, որտեղից երեւում է խողովակը: Ապակու վրա խողովակի ուղիղ մէջտեղում արւած է մի նշան:

ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ: — Որպէսզի որոշենք թէ սեղանի երեսը հորիզոնական է արդեօք թէ ոչ, վերցնում ենք հարթաշափը և դնում սեղանի վրա: ունայում ապակուն, թէ գատարկ տարածութիւնը, որը սնդիկի նման շարժում է այս ու այն կողմը, կանգնած է արդեօք նշանի մօտ, թէ ոչ. եթէ նշանի մօտ է, կնշանակէ սեղանի ե-

րեսը հորիզոնական է. իսկ եթէ ծուած է աջ կամ ձախ, կնշանակէ սեղանի երեսը թեք է. որ կողմը որ փախչի գատարկ տարածութիւնը, այն կողմը բարձր է, իսկ հակառակ կողմը ցածր:

ՈՒՂԴԱՀԱՅԵԱՅՑ ԳԻԾ: — (Перенесен на языки). Վերցնենք մի թել և նրա ծայրից կապենք մի ծանրութիւն, իսկ միւս ծայրը բռնենք ձեռներումս ու ծանրութիւնը բաց թողնենք. այդ ծանրութիւնը մի քիչ ճօճելուց յետոյ կ'կանգնի. թելի բռնած ուղղութիւնը հանգիստ դրութեան մէջ կոչւում է ուղղահայեց, եթէ այդ ուղղութեան զբատախտակի վրա քաշենք մի գիծ, կստանանք ուղղահայեց գիծ: Թելը ծանրութեան հետ միասին կոչւում է լար: (Նկար 13): Լարը գործ են ածում որմնագիլները (բաննահները) որոշելու համար շարած պատերը ուղղահայեց են արդեօք թէ ոչ: Ուղղահայեց բառի տեղ գործ են ածում նշանը:

ԶՈՒԳԱՀԱՅԵԱՅՑ ԳԻԾ: — (Параллельная линия). Գծենք զբատախտակի վրա երկու գիծ և այդ գծերը երկու ծայրերից էլ շարունակենք. եթէ շարունակելիս այդ գծերը իրար չը պատահնեն, կինին զուգահեռական: Նկ. 14: Նկար 14.

Օրինակ զբատախտակի վերին և ներքին եզրները իրար զուգահեռական են: Դասարանի առաստաղը յատակին զուգահեռական է. կարող են միշտը գծեր իրար զուգահեռական լինել. օրինակ. չորս-հինգ: Նկար 15: Պարզ է, որ մի գիծն առանձին զուգահեռական լինել չի կարող, ամենաքիչը հարկաւոր է

Երկու գիծ, որ մէկը միւսին զուգահեռական լինի. Զուգահեռական բառի տեղ գործ են ածում | | նշանը:

Զուգահեռական գծեր քաշելու համար զործ են ածում զուգահեռական քանոններ: Նկ. 16:

Վերցրած է մի զոյզ հաւասար քանոններ և երկու տեղից նկար 16.

իրար հետ ամրացրած է հաւասար հեռաւորութեան վրա շարժական ձողերով:

A————B Ենթադրենք տւած է D կէտից
C————D A B գծին քաշել մի զուգահեռական
նկար 17. գիծ: Նկար 17:

(Գծերը կարդում ենք տառերով, որոնք արւում են գծի ծայրերին, այդ տառերը ֆրանսիական այբբուբէնի տուածին և վերջին մի քանի տառերն են՝ A, B, C, D, E, F, X, U, Z.) Վրա համար վերցնում ենք քանոններից է էֆ իկո իգրեկ զէս:

մէկը գնում A B գծի վրա, իսկ միւսը բաց անում մինչև D կէտը և ապա այդ քանոնի ուղղութեամբ քաշում ենք մի գիծ. այդ նոր C D գիծը կլինի A B գծին զուգահեռական:

ԹԵՐ ԳԻԾ: — ԹԵՐ կոչում է այն ուղիղ գիծը, որը ոչ նորիզոնական է, ոչ էլ ուղղահայեաց: Նկար 18:

Նկար 18.

Կարկին. (Циркуль).

ԿՈՉՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ: — Կարկին

ունի հետեւեալ կազմութիւնը. վերցրած է երկու մետաղեայ ձողեր, որոնց մի ծայրերը բութ են, իսկ միւսները սուր. բութ ծայրերը միացրած են իրար հետ այնպէս, որ նրանք մկրատի նման բացւում, փակւում են. սուր ծայրերից մէկի վրա ամրացրած է լինում մատիտ կամ կաւիճ: Նկար 19:

Կարկինը գործ ենք ածում այն ժամանակ, երբ ցանկանում ենք մի գիծ բաժանել երկու կամ աւելի հաւասար մասերի, երբ ուզում ենք մի գծի վրա իջեցնել ուղղահայեաց գիծ և ուշ նկար 19. Ծիշ շատ գէպերում:

Դիցուք տւած է մեզ բաժանել A B գիծը երկու հաւասար մասերի: Նկար 20:

Դրա համար վերցնում ենք կարկինի սուր ծայրը, գնում A կէտին և կարկինը բաց անում գծի A————B կէտից աւելի, ապա զծի վերկում և ներքեռում քաշում ենք աղեղները. յետոյ կարկինի սուր ծայրը գնում ենք զծի միւս ծայրին B Նկար 20.

Կէտին և նոյն բացւածքով կարում ենք մեր քաշած աղեղները. յետոյ քանոնով միացնում ենք իրար հետ երկու աղեղների կարւած աղեղերը: Սյափիսով զծը բաժանում է երկու հաւասար մասերի: Եթէ ուզում ենք մի զծի բաժանել չորս հաւասար մասի, առաջ նրան բաժանում ենք երկու հաւասար մասի. այդպիսով զծը բաժանում է չորս հաւասար մասի:

Այդ միևնույն կերպ կարելի է զծը բաժանել, 8, 16,

32 և աւելի հաւասար մասերի:

Կարկինը գործ ենք ածում և այն ժամանակ, երբ հարկաւոր է մի գծի վրա իջեցնել ուղղահայեաց: Ուղղահայեաց իջեցնելիս պատահում է երկու դէպք:

Ա. Ա. Ձին, երբ տւած է լինում մի զիծ և այդ գծի վրա մի կէտ. այդ կէտին պէտք է կանգնեցնենք ուղղահայեաց: Օրինակ A ————— B տւած է A B գծի վրա C կէտը. (նկ. նկար 21.)

21) պէտք է C կէտին կանգնեցնել ուղղահայեաց. վերցնում ենք կարկինը և սուր ծայրը դնում C կէտի վրա, ապա որևէ բացւածքով C կէտի աջ և ձախ կողմերում հաւասար հեռաւորութեան վրա նշանակում ենք երկու կէտ D և E. յետոյ կարկինը դնում ենք D կէտին և բացանում մինչեւ E կէտը ու գծի վերելում քաշում մի աղեղ, որտեղ նշանակում ենք F տառը. ապա կարկինի սուր ծայրը դնելով E կէտին, կտրում ենք վերելում քաշած աղեղը: F կէտը միացնում ենք ուղիղ գծով C կէտի հետ. C F գիծը կլինի մեր ուղած ուղղահայեացը:

ԵՐԿՐՈՐԴԻ: — Տւած է մեզ A B գիծը. (նկ. 22). և նրանից դուրս C կէտը. պահանջում է այդ C կէտից իջեցնել մի ուղղահայեաց A B գծին:

C

Դրա համար կարկինի սուր ծայրը դնում ենք C կէտին և միևնույն բացւածքով A B գիծը կտրում երկու առեղից Ս կէտի աջ և ձախ կողմերում է, որ այդ մակերեսոյթն ուղիղ է կամ հարթ: Այդպիսի մակերեսոյթն ասում ենք հարթ մակերեսոյթ:

բում դնում ենք երկու տառ D և E. յետոյ կարկինի մի ծայրը դնելով D կէտի վրա, բաց ենք անում մինչեւ E կէտը և գծի ներքեւում քաշում ենք մի աղեղ F, ապա կարկինի սուր ծայրը դնելով E կէտին, նոյն բացւածքով կտրում ենք մեր քաշած աղեղը, յետոյ քանոնով միացնում ենք C և F կէտերը. C F գիծը կլինի ուղղահայեաց A B գծին:

Մակերեսոյթներ և նրանց տեսակները.

Ինչպէս զիտենք, խորանարգի սահմաններից ամեն մէկը առանձին վերցրած կոչւում է երես, իսկ բոլոր երեսները միասին վերցրած կոչւում է մակերեսոյթ:

Մակերեսոյթն ունի միմիայն երկարութիւն և լայնութիւն իսկ բարձրութիւն չունի: Մակերեսոյթները բաժանվում են զանազան տեսակների՝ հարթ մակերեսոյթ, կոր և կոտրուած:

ՀԱՐԹ ՄԱԿԵՐԵՒՈՅՑԹ, ՀԱՐԹՈՒԹԻՒՆ: — (Պլոսкություն).

Վերցնենք մի մակերեսոյթ և նրա վրա մատիտով նշանակենք երկու կէտ. յետոյ քանոնի կողերից մէկը դնենք այդ երկու կէտերի վրա, կտեսնենք, որ քանոնի կողը հաւասարապէս (քիփ) կպած է մակերեսոյթին, սրանից հետեւում է, որ այդ մակերեսոյթն ուղիղ է կամ հարթ: Այդպիսի մակերեսոյթն ասում ենք հարթ մակերեսոյթ:

Հարթ մակերեսոյթներին ուրիշ խօսքով ասում ենք նաև հարթութիւն. ուրեմն հարթութիւն կոչւում է այն մակերեսոյթը, որի վրա քանոնի կողը հաւասարապէս իր բոլոր կէտերով կպած է: Մենք զիտենք, որ քանոնի կողը ուղիղ գիծ է, հետեւապէս հարթութիւն կոչւում է

այն մակերեսոյթը, որին ուղիղ գիծը կպչում է իր բոլոր կէտերով:

ԿՈՐ ՄԱԿԵՐԵՍԻՈՅԹ:— (Քրիայ նօսերխութ): Կոր մակերեսոյթ կոչում է այնպիսի մակերեսոյթը, որի ոչ մի մասը հարթ մակերեսոյթ չէ. օրինակ վառարանի խողովակի մակերեսոյթը, գերանի, խնձորի, դնդակի մակերեսոյթները և այլն:

ԿՈՏՏՏԻԱԾ ՄԱԿԵՐԵՍԻՈՅԹ:— (Լոմանիա նօսերխութ): Կոտրտուած կոչում է այն մակերեսոյթը, որը հազմւած է մի քանի իրար կտրող հարթ մակերեսոյթներից:

ԽՈՐԴՈՒԲՈՐԴ ԿԱՄ ԽԱՌԸ ՄԱԿԵՐԵՍԻՈՅԹ:— (Ըմբանիա նօսերխութ): Այն մակերեսոյթը, որը կազմւած է հարթ, կոր և կոտրտուած մակերեսոյթներից միասին, կոչում է խորդ ու բորդ կամ խառը մակերեսոյթ. օրինակ երկրի մակերեսոյթը մի տեղ հարթ է մէ ուրիշ տեղ կոր և այլն:

Վարժութիւններ.

- 1) Նկարեցէք մի քանի գծեր:
- 2) Բաժանել գիծը երկու և աւելի հաւասար մասերի:
- 3) Նկարեցէք հորիզոնական, ուղղահայեաց, թեք և դուդական գծեր:
- 4) Իջեցնել հորիզոնական գծի վրա ուղղահայեաց:
- 5) Նկարեցէք կոր, կոտրտուած, խառը և շրջանածե գծեր:

Հարցեր. Ո՞րն է առջե, ետև, աջ, ձախ, վերև և ներքև, ի՞նչ է նշանակում ուղղութիւն: Ո՞րն է կէտը, գիծը: Քանի

տեսակ գծեր են լինում: Որոնք են ուղիղ, կոտրտուած, կոր, շրջանածե և խառը գծերը: Ո՞րն է կոչում հորիզոնական, թեք, ուղղահայեաց, զուգահեռական գիծ: Ո՞րն է հարթաչափը: Քանի կերպ կարելի է հորիզոնական գծի վրա ուղղահայեաց իջեցնել: Ո՞րն է կարկինը: Ո՞րն է կոչում մակերեսոյթը: Որոնք են հարթ, կոր, կոտրտուած և խորդուբորդ մակերեսոյթները:

Անկիւններ. (Սրալ).

29402-63


Վերցնենք հարթութեան վրա մի կէտ և այդ կէտից անցկացնենք երկու ուղիղ գծեր զանազան ուղղութեամբ, բայց անորոշ երկարութեան. այն տարածութիւնը, որը գտնուում է այդ երկու գծերի մէջ կոչում է անկիւն: Նկար 23:

Նկար 23.

ԱՆԿԻՒՆ ՄԱՍԵՐԸ:— Այն երկու ուղիղ գծերը, որոնց կազմւած է անկիւնը, կոչում են անկեան սրունքներ կամ կողմեր. սրունքների միջի տարածութիւնը կոչում է անկեան բացւածք: Իսկ սրունքների միացած կէտը կոչում է անկեան գագաթ: Անկեան մեծութիւնը կախւած է անկեան բացւածքից և կապ չունի սրունքների երկարութիւնից: Ուրեմն անկիւնը ունի երկու սրունք, մի բացւածք և մի գագաթ:

ԱՆԿԻՒՆ Նշանակում ենք երեք տառով A B C, որոնց մասը գրւում է գագաթի մօտ (Նկար 24,): B տառը՝ վերին սրունքի ծայրին, իսկ C տառը՝ ստորին սրունքի ծայրին: Եթեմն անկիւնը նշանակում ենք մասն պատճենով, այդ գէպում A

Նկար 24:



A
տառը դնում ենք անկեան բացւած-
քում: (Նկար 25): Անկիւնը կարգում
ենք հետևեալ կերպով՝ նախ կարգում

ենք վերին սրունքի տառը, ապա գա-
գաթի տառը և յետոյ վերջին տառը. օրինակ. անկիւն
B A C (Նկար 24): Անկիւն բառի տեղ գործ են ածում |
նշանը:

Անկիւնների տեսակները.

Անկիւնները լինում են հետևեալ տեսակների՝ ուղիղ
անկիւն, սուր անկիւն, բութ անկիւն. կան և այդ անկիւն-
ներից կազմւած հետևեալ անկիւնները — կից կամ հարկան
անկիւններ և հակադիր անկիւններ:

ՈՒՂԻՂ ԱՆԿԻՒՆ:— (Прямоой уголъ). Վերցնենք մի
հորիզոնական գիծ և նրա ծայրին իջե-
ցնենք մի ուղղահայեաց. այդ ուղղա-
հայեացը և հորիզոնականը միասին
կազմում են մի անկիւն, որին ասում
ենք ուղիղ անկիւն: (Նկար 26): Դա-
սարանի պատերը յատակի և տռաստա-
զի հետ կազմում են ուղիղ անկիւններ. գրատախտակի վե-
րին և կողքի եղբները նոյնպէս կազմում են ուղիղ ան-
կիւն: Ուղիղ անկիւն ասելու փոխարէն զործ են ածում
և տառը. ուրեմն երբ որ ասում ենք մի և — նշանակում
է մի ուղիղ անկիւն:

Նկար 26.

ՍՈՒՐ ԱՆԿԻՒՆ:— (Острый уголъ). Այն անկիւնը, որի
բացւածքը փոքր է ուղիղ անկեան բաց-
ւածքից և կողմերը իրար ուղղահայեաց
չեն, կոչւում է սուր անկիւն: Նկ. 27:

Նկար 27.

ԲՈՒՐ ԱՆԿԻՒՆ:— (Тупоий уголъ). Այն անկիւնը, որի
բացւածքը մեծ է ուղիղ անկեան բացւածքից և որի կող-
մերը իրար ուղղահայեաց չեն, կոչ-
ւում է բութ անկիւն: (Նկար 28:) Ու-
րեմն բութ անկիւնը իր մէջ պարու-
նակում է մի ուղիղ անկիւն և մի սուր
անկիւն:

Նկար 28.

ԿԻՑ ԿԱՄ ՀԱՐԵՒԱՆ ԱՆԿԻՒՆՆԵՐ:— (Смежные углы).

Իջեցնենք հորիզոնական գծի վրա մի ուղիղ, գիծ այդ գծե-
րի միացած տեղում կ'կազմմէի իրար
կողքի երկու անկիւն. այդ անկիւնները
կոչւում են կից կամ հարկան անկիւն-
ներ: Նկար 29:

Կից անկիւնները ունին մի ընդ-
հանուր գագաթ և մի ընդհանուր կողմ, իսկ միւս երկու
կողմերը կազմում են մէկ մէկու շարունակութիւն: Կից
անկիւններից մէկը լինում է բութ անկիւն, իսկ միւսը
սուր. կարող է պատահել, որ երկուսն էլ լինեն ուղիղ
անկիւններ:

Կից կամ հարկան անկիւնների գումարը հաւասար է
երկու մէկի սրանից հետեւում է, որ մի գծի մի կողմում
գտնւած անկիւնների գումարը հաւասար է երկու ուղիղ
անկեան, իսկ մի գծի երկու կողմում կամ մի էլեափ չորս
կողմը գտնւած անկիւնների գումարը հաւասար կլինի
չորս ուղիղ անկեան:

ՅԱԿԱՐԻՐ ԱՆԿԻՒՆՆԵՐ:— (Вертикальные углы). Եր-
կու ուղիղ գծեր իրար կարելով, մի էլեափ կազմում են
չորս անկիւն. այդ անկիւններից որեւէ երկու իրար գէմ
գտնւածները կոչւում են հակադիր անկիւններ: Նկար 30:

Ուրեմն երկու ուղիղ գիծ իրար կարելով, կազմում
են երկու զոյգ, հակադիր անկիւններ։
Հակադիր անկիւններից երկուսը լինում
են սուր իսկ երկուսը բութ։ կարող է պատճել, որ հակադիր անկիւնները
չորսն էլ ուղիղ լինեն։ Սյովէս կլինի այն ժամանակ, երբ գծերը իրար կարեն
ուղղահայեաց։


ԱՆԿԻՒՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆԸ։ — Մենք գիտենք,
որ երկու ուղիղ գծեր իրար հանդիպելով, կազմում են
անկիւն, գիտենք նոյնպէս, որ անկեան մեծութիւնը կախ-
ւած է նրա բացւածքից։ Եթէ երկու անկեան բացւածք-
ները լինեն միմեանց հաւասար, կ'նշանակէ այդ անկիւն-
ները իրար հաւասար են։

Դիցուք մեզ տւած է իմանալ թէ Ա Ա Ծ և Բ, Ա, Ծ,
Ա Ծ և Ա, Բ, Բ, Ա, Ծ անկիւններից որն է մեծ կամ
փոքր. (Ակար 31.) Դրա համար
վերցնում ենք Բ Ա Ծ ան-
կիւնը և գնում Բ, Ա, Ծ, ան-
կեան վրա այնպէս, որ Ա գտ-
գաթը ընկնի Ա, գտգաթի վրա.
Ա Ծ կողմը ծածկի Ա, Ծ, կողմին, եթէ Բ Ա Ծ անկիւնը
փոքր է Բ, Ա, Ծ, անկիւնից այն ժամանակ Ա Բ կողմը
կը դնոյ Բ, Ա, Ծ, անկեան միջով. Եթէ հաւասար լինեն
իրար՝ Ա Բ կողմը կը ծածկի Ա, Բ, կողմին. իսկ եթէ մեծ
լինի՝ Ա Բ կողմը կընկնի Բ, Ա, Ծ, անկիւնից գուրս։

ԱՆԿԻՒՆԵՐԻ ԶԱՓԵԼԸ։ — (Измерение углов). Որ-
պէսզի իմանանք թէ մի անկիւն ինչ մեծութիւն ունի,
դրա համար գործ ենք ածում մի գործիք, որին ասում

ենք անկիւնաչափ։ Նկար 32.

Անկիւնաչափն ունի հետեւալ կազմութիւնը։
Վերցրած է մի պղնձէ կամ փայտէ կիսաշրջան, այդ
կիսաշրջանը երկու ծայրերից ամրացրած է մի տախտա-
կի վրա, տախտակի ուղիղ մէջտեղում՝ նշանակած է մի



Նկար 32.

կէտ, որը կոչւում է կենդրոն։ Կիսաշրջանը բաժանւած է 180 մասերի. այդ մասերից ամեն մէկը կոչւում է աս-
տիճան. աստիճանը գրւում է $^{\circ}$ տառով, որը գրւում է
թւի վերել աջ կողմից. օրինակ յիսուն աստիճան $= 50^{\circ}$
և այլն։


Իւրաքանչիւր աստիճանը բաժանւում է 60 մասի. այդ
մասերից ամեն մէկը կոչւում է րոպէ. ամեն մի րոպէն
բաժանւում է 60 մասի, որոնք կոչւում են վարկեաններ. րոպէն գրւու համար գործ են ածում մէկ ստորակէտ,
որը գրւում է թւի վերե աջ կողմից, իսկ վարկեան գրե-
լու համար՝ երկու սատրակէտ հոյն տեղում դնելով։ Օրի-
նակ, պէտք է գրել հինգ աստիճան տասնեօթ րոպէ և ե-
րեսուն երկու վարկեան $5^{\circ} 17' 32''$.

ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ։ — Անկիւնը չտփելու համար ան-
կիւնաչափը դնում ենք անկեան վրա այնպէս, որ անկիւ-

նաշափի կենդրոնը ընկնի ճիշտ անկեան գագաթի վրա և անկիւնաչափի տախտակը ընկնի անկեան ստորին սրունքի վրա. անկեան միւս սրունքը կընկնի անկիւնաչափի աստիճաններից մէկի վրա. որ աստիճանի վրա որ ընկնի անկեան միւս սրունքը, այնքան աստիճան մեծութիւն կունենայ անկիւնը: Եթէ չափենք ուղիղ անկիւնը, կ'առանք, որ նու հաւասար է ուղիղ 90° -ի, այսինքն անկիւնաչափի կիսին: Ուրեմն սուր անկիւն ասելով պէտք է հասկանալ միշտ 90° -ից պակաս, իսկ բութ անկիւն 90° -ից աւել:



Գործողութիւններ անկիւնների հետ.

ԳՈՒՄԱՐՈՒՄ: — Ենթադրենք տւած է գումարել եր-



որ A, գագաթը ընկնի A գալաթի վրա. A, C, կողմը ընկնի A B կողմի վրա. այն ժամանակ A, B, կողմը կընկնի B A C անկիւնից գուրս և կ'ստացւի մի նոր աւելի մեծ անկիւն B, A C որը կընկնի մեզ տւած երկու անկիւնների գումարը: Նկար 34:

ՀԱՆՈՒՄ: — Ենթադրենք տւած է նոյն երկու անկիւնները B A C և B, A, C, և պէտք է B A C | -ից հանենք B, A, C, | -ը. դբա համար պէտք է տւած անկիւնները զնել իրար վրա այնպէս, որ A, գագաթը ընկնի A գագաթի



վրա. A, B, կողմը ընկնի A B կողմի վրա. այն ժամանակ A, C, կողմը կընկնի B A C անկեան մէջ: Նոր ստացւած B A B, անկիւնը կընկնի մեզ տւած երկու անկիւնների տարբերութիւնը: Նկար 35:

Վարժութիւններ.

- 1) Նկարեցէք մի քանի հատ անկիւններ:
- 2) Նկարել ուղիղ, սուր և բութ անկիւններ:
- 3) Նկարել կից կամ հարեան և հակադիր անկիւններ:
- 4) Համեմատել երկու անկիւններ իրար հետ:
- 5) Զափել անկիւնաչափով բութ, սուր և ուղիղ անկիւններ և գրել նրանց աստիճաններով:
- 6) Ի՞նչ անկիւն են կազմում ժամացոցի սլաքները ժամը 3-ին, 9-ին, 12-ին և 1-ին:
- 7) Հարեան անկիւններից մէկը հաւասար է 65° -ի գանիլ նրա կից անկիւնը:

Հարցեր. Ո՞րն է կոչւում անկիւն: Ի՞նչ մտսեր ունի անկիւնը: Ի՞նչպէս ենք գրում անկիւնը տառերով: Քանի՞ տեսակ անկիւններ կան: Ի՞նչ է նշանակում ձ: Ի՞նչից է բաղկացած մի բութ անկիւնը: Որմնք են հարեան և հակադիր անկիւնները: Քանի՞ դէպք է պատահում անկիւնները համեմատելիս: Ի՞նչ բան է անկիւնաչափը: Ի՞նչպէս ենք չափում անկիւնները: Սուր, ուղիղ և բութ անկիւնները 90° -ից մեծ են թէ փոքր:

Քառակուսի (Քառակուսի).

Տարածութեան այն մասը, որը ըրջապատած է չորս

հաւասար գծերով և որն ունի չորս ուղիղ անկիւն, կոչւում է քառակուսի: (Նկար 36:.) Քառակուսի է խորանարդի ամեն մի երեսը:
Նկար 36.

ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԱՍԵՐԸ: ԿՈՂՄԵՐ: — Քառակուսին ունի չորս հաւասար կողմեր, որոնց միացած տեղերում կազմւում են չորս հատ ուղիղ անկիւններ, որոնք բոլորն էլ իրար հաւասար են: Բացի կողմերից և անկիւններից քառակուսին ունի և մակարդակ: Քառակուսու մակարդակի մեծութիւնը կախւած է կողմերի երկարութիւնից կամ կարճութիւնից: Քառակուսու կողմերը որքան երկար լինեն, մակարդակն էլ այնքան մեծ կլինի և ընդհակառի:

Քառակուսի նկարելու համար վարւում ենք այսպէս. վերցնում ենք մի զիծ և նրա երկու ծայրերին իջեցնում երկու այնպիսի ուղղահայեացներ, որոնք հաւասար լինեն մեր վերցրած գծին, ապա իջեցրած ուղղահայեացների ծայրերը միացնում ենք իրար հետ. այսպիսով ստանում ենք քառակուսի:

Չափեր (Մերք).

ՉԱՓԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ: — Չափերը լինում են երեք տեսակ. հասարակ չափեր (արշին, սաժէն, վերստ և այլն). քառակուսի չափեր (քառակուսի արշին, սաժէն և այլն) և խորանարդ չափեր (կубիչескія մերք) (խորանարդ արշին, սաժէն և այլն):

ՉԱՓԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ: — Երկարութիւն չափերու համար գործ ենք ածում միմիայն հասարակ չափեր: Ենթադրենք ուզում ենք իմանալ դպրոցից մինչև եկեղե-

ցին ինչքան տարածութիւն է: Դրա համար վերցնում ենք սովորական գործածական արշինը կամ սաժէնը և չափում ենք այդ ճանապարհի երկարութիւնը. քանի անգամ որ արշինը կամ սաժէնը տեղաւորւի այդ տարածութեան մէջ, կնշանակէ այնքան արշին կամ սաժէն է դպրոցից մինչև եկեղեցին:

ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ՉԱՓԵԼԸ: — (Измѣреніе площадей). Ենթադրենք ուզում ենք ներկել դահլիճի յատակը. վարպետը պահանջում է իւրաքանչիւր քառակուսի սաժէնի համար 20 կոտէկ: Որպէսզի գտնենք թէ դահլիճի յատակը քսնի քառակուսի սաժէն է, զրա համար հասարակ սաժէնով չափում ենք յատակի երկարութիւնը և լայնութիւնը, ապա ստացած թւերը բազմապատկել իրար հետ. մթէ չափում ենք վերշոկները, եթէ չափում ենք արշիներով ստանում ենք քառակուսի վերշոկներ, եթէ չափում ենք արշիներով ստանում ենք քառակուսի արշիններ և այլն:

ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՉԱՓԵԼԸ: — Ինչպէս բոլոր մակարդակները, այնպէս էլ քառակուսու մակարդակը կարելի է չափել. Մեր սովորածի համաձայն պէտք է չափենք քառակուսու երկարութիւնը և լայնութիւնը, ապա ստացած թւերը բազմապատկենք, բայց որովհետեւ քառակուսու երկարութիւնը և լայնութիւնը իրար հաւասար են, զրա համար էլ բաւական է չափել միմիայն երկարութիւնը, կամ լայնութիւնը և ստացած թիւը բազմապատկել իր վրա: Քառակուսի չափերը նշանակում ենք □

նշանով: Օրինակ երբ ասում ենք 500 քառակուսի սաժէն, պէտք է զըել 500 [] սաժ. այն մակարդակը որի երկարութիւնը և լայնութիւնը մէկ արշին է, կոչւում է քառակուսի արշին, իսկ այն մակարդակը, որի երկարութիւնը և լայնութիւնը մէկ սաժէն է, կոչւում է քառակուսի սաժէն. կայ նոյնպէս քառակուսի վերջոկ, վերստ, մղոն և այլն:

ԽՈՐԱՆԱՐԴԻ ՄԾԿԵՐԵԼՅՅԹԻ ԶԱՓԵԼԸ: — Ի՞նչպէս գիտենք, խորանարդի վեց երեսները միասին վերցրած կազմում են խորանարդի մակերեսոյթը: Սյդ մակերեսոյթի մեծութիւնը գտնելու համար պէտք է չափել խրաքանչիւր երեսի մակարդակը առանձին և ապա իրար հետ գումարել բոլորը. բայց որովհետև բոլոր վեց երեսներն էլ իրար հաւասար են, դրա համար էլ բաւական է չափել միմիայն մի երեսի մակարդակը և ապա բազմապատկել վեց անգամ: Ստացածը կլինի խորանարդի մակերեսոյթը:

Բովանդակութիւն և նրա չափելլը.

Բովանդակութիւն ասելով պէտք է հասկանալ մարմինների օդի մէջ բռնած տարածութիւնը: Դիցուք մեր առաջ դրած է սեղանի վրա մի արկդ. արկդի օդի մէջ բռնած տարածութիւնը կլինի նրա բովանդակութիւնը: Բովանդակութիւնը չափելու համար գործ են ածում խորանարդ չափեր:

Մեր սովորած խորանարդն ունի երկարութիւն, լայնութիւն և բարձրութիւն: Որպէսզի չափենք խորանարդը պէտք է ունենանք այնպիսի մի չափ, որը նոյնպէս ու-


նենայ երկարութիւն, լայնութիւն և բարձրութիւն. ահա այդ չափն է խորանարդը:

Վերցնենք մի փոքրիկ խորանարդ, որն ունենայ մէկ արշին երկարութիւն, մէկ արշին լայնութիւն և մէկ արշին բարձրութիւն. դա կլինի խորանարդ արշին. կայ և խորանարդ վերջոկ, խորանարդ սաժէն և այլն:

Բովանդակութիւնը չափելու համար չափում ենք մարմնի երկարութիւնը, լայնութիւնը և բարձրութիւնը, ապա բազմապատկում ստացած երեք թւերը, որը կլինի բովանդակութիւնը խորանարդ չափերով:

Մասշտաբ կամ չափագիծ (Մասպաճъ).

Ենթադրենք, ցանկանում ենք թղթի վրա նկարել բազի երկարութիւնը, որը հաւասար է 50 սաժէնի. այդ անել թղթի վրա անհնար է, որովհետև այնքան մեծ թուղթ չունենք. դրա համար էլ բազի երկարութիւնը նկարում ենք փոքրացրած դիրքով. փոքրացրած դիրքով նկարելու համար գործ ենք ածում չափագիծ կամ մասշտաբ:



Դրա համար վերցնում ենք թղթի վրա մի գիծ A B և բաժանում այնպիսի հաւասար մասերի, որ ամեն մի մասը հաւասար լինի մի դիւյմի: Պայմանաւորւում ենք, որ գծի ամեն մի դիւյմը հաւասար է մի սաժէնի. այսինքն սաժէնը փոքրացրած է 84 անգամ, որովհետև սաժէնը ունի 84 դիւյմ. բացի այդ, ամեն մի դիւյմը բաժանում

ենք երեք հաւասար մասերի, որոնցից ամեն մէկը հաւասար է մի արշինի փոքրացրած գիրքով։ Ա Յ գիծը իր մասերի հետ միասին կը չըում է չափազիծ, կամ գծային մասշտաբ։ (լինեանի մասնաբ) այժմ ենթադրենք, ցանկանում ենք քաշել թղթի զրա 4 սաժէն 1 արշին փոքրացրած գիրքով մեր սովորած մասշտաբով։

Դրա համար վերցնում ենք թղթի զրա մի գիծ, որը հաւասար լինի մասշտաբի մեջ մասերից 4-ին, որովհետեւ ամեն մի մասը հաւասար է 1 սաժէնի. իսկ մի արշինի համար մեր քաշած գծին կպցնենք մի գիծ, որը հաւասար լինի փոքր կտորներից մէկին. այդպիսով կտանանք թղթի զրա 4 սաժ, 1 արշ. 84 անգամ փոքրացրած։

Ընդունած է աների յատակագծերը նկարելիս սաժէնի փոխարէն վերցնել գիւյմ. այսինքն իսկականը փոքրացնել 84 անգամ, կանագան հոդաբաժիններ և գաշտեր նկարելիս հարիւր սաժէնի տեղ վերցնել մի գիւյմ. իսկ աշխարհագրական քարտէզներ նկարելիս 100 վերստի փոխարէն պիտի վերցնել մի գիւյմ, այսինքն իսկականը փոքրացնել 4,450,000 անգամ. Ուրեմն երբ քարտէզի տակ գրւած է մասշտաբ $\frac{1}{4450000}$ այդ հշանակում է 100 վերստի տեղ վերցրած է մի գիւյմ։

Վարժութիւններ.

- 1) Նկարեցէք քառակուսիներ։
- 2) Ասացէք մեր սովորած չափերի անունները։
- 3) Ինչին է հաւասար այն մակարդակը, որի երկարութիւնը 37 արշ. լայնութիւնը 13 արշին։
- 4) Իմանալ քանի աղիւս կտանի դասարանի յատակը, որի

երկարութիւնն է 5 սաժէն, լայնութիւնը 2 սաժ. իսկ աղիւսի մեծութիւնը մի քառակուսի արշին։

5) Իմանալ քանի թոփ պաստառ կզնայ գահլիճը պաստառու համար, եթէ իւրաքանչիւր պատի երկարութիւնը 7 արշին է, իսկ բարձրութիւնը 5 արշին. Պաստառի թոփը ունի 11 արշին երկարութիւն և 1 արշին լայնութիւն։

6) Իմանալ դասարանի բնվանդակութիւնը, եթէ դասարանի երկարութիւնն է 9 արշին, լայնութիւնը 6 արշին, իսկ բարձրութիւնը 7 արշին։

Դաստիարակութիւն աշխարհագրական մասշտաբներ
Հարցեր. Ո՞րն է կոչում քառակուսի։ Ի՞նչ մասեր ունի քառակուսին։ Քանի տեսակ չափեր կան։ Ո՞ր տեսակ չափերը երբ ենք գործ ածում։ Ի՞նչպէս ենք չափում մակարդակները և մակերեսութները։ Ի՞նչ քան է բռվանդակութիւն։ Ինչպէս ենք չափում բռվանդակութիւնը։ Ինչպէս ենք շինում մասշտաբը։ Ինչին համար ենք գործ ածում մասշտաբը։

92

Գ Ա Կ.

Թիգիքական և երկրաչափական մարմիններ	3
Խորանարդ	4
Սրտաքին և ներքին անկիւններ	5
Գաղափար տեղերի մասին	7
Ուղղութիւններ	7
Կարկին	12
Մակերևոյթներ և նրանց տեսակները	15
Անկիւններ	17
Անկիւնների տեսակները	18
Գործողութիւններ անկիւնների հետ	22
Քառակուսի	23
Զափեր	24
Բավանդակութիւն և նրա չափելը	26
Մասշտաբ կամ չափազիծ	27



L0065300

H ADM
3-8292

1917

2013

Դիմել

Երևան «Արարատ» գրախանութեա և տպարան «Կուլտուրա»



